ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք.Երևան «30» 01 2026թ N 181-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի N 702-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետով՝

Հ ր ա մ ա յ ու մ ե մ

1. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2025 թվականի փետրվարի 28-ի «Արտահանման խթանման նպատակով օժանդակության տրամադրման մասին պայմանագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» N 702-Լ հրամանով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի.

2. Սույն հրամանի գործողությունը տարածվում է 2026 թվականի հունվարի 1-ից կնքված պայմանագրերի նկատմամբ:

Recoverable Signature

X

Signed by: GEVORG PAPOYAN 2102870448

ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ

Հավելված
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2026 թ.01...30. N/81/հրամանի

«Հավելված
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2025 թվականի փետրվարի 28-ի
N 702-Լ հրամանի

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N

ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «——»————— 202—թ.

Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարությունը, (այսուհետ՝ Նախարարություն) ի դեմս Նախարարության գլխավոր քարտուղար _____ -ի, ով գործում է Նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և _____ ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա/պետական գրանցման հիման վրա, (այսուհետ՝ Շահառու) մյուս կողմից (այսուհետ երկուսը միասին Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի հունվարի 23-ի «Արտահանման խթանման նպատակով օժանդակության տրամադրման ծրագիրը հաստատելու մասին» N 98-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում) և Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1910-Ն որոշումը, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Շահառուն Հայաստանի Հանրապետությունից «Արտահանում» կամ «Վերաարտահանում» մաքսային ընթացակարգով արտահանել է _____ Հայաստանի Հանրապետության ծագման _____ ապրանք(ներ), իսկ Նախարարությունը պարտավորվում է Շահառուին տրամադրել օժանդակություն ապրանքի արտահանումից հետո ներմուծվող երկրի օրենսդրությամբ այդ ապրանքի համար սահմանված մաքսատուրքի դրույքաչափին համապատասխան (բայց ոչ ավելի, քան Որոշմամբ սահմանված չափը) հաշվարկված գումարի չափով, եթե ներմուծման երկիր ապրանքի համար սահմանված չէ մաքսատուրքի զրոյական դրույքաչափ:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Նախարարությունը իրավունք ունի:

2.1.1 Պահանջել Շահառուի կողմից Պայմանագրի 1.1 կետում նշված երկիր ապրանքի արտահանման ծավալների (այդ թվում՝ վճարած հարկերի, ստեղծած աշխատատեղերի և վճարած աշխատավարձերի) վերաբերյալ տվյալներ:

2.2 Նախարարությունը պարտավոր է:

2.2.1 Պայմանագրի 3.1. կետում նշված օժանդակության գումարը Պայմանագրի հավելվածի Ձևով հաստատված հանձնման-ընդունման ակտի հիման վրա փոխանցում է Շահառուի բանկային հաշվին՝ 2.4.3. կետով սահմանված պահանջների կատարումից հետո 14 աշխատանքային օրվա ընթացքում:

2.2.2 Փոխհատուցման ենթակա գումարը փոխանցել Շահառուի հաշվեհամարին՝ անկանխիկ եղանակով:

2.3 Շահառուն իրավունք ունի:

2.3.1 Անհրաժեշտության դեպքում ստանալ պարզաբանումներ Որոշման դրույթների վերաբերյալ:

2.4 Շահառուն պարտավոր է:

2.4.1 Պահպանել Որոշմամբ սահմանված պահանջները:

2.4.2 Նախարարության պահանջով Նախարարություն ներկայացնել Պայմանագրի 1.1 կետում նշված երկիր ապրանքի արտահանման ծավալների (այդ թվում՝ վճարած հարկերի, ստեղծած աշխատատեղերի և վճարած աշխատավարձերի) վերաբերյալ տվյալներ:

2.4.3. Պայմանագիրը ստորագրելուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում Նախարարության հետ կնքելու Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2010 թվականի մայիսի 18-ի N 346-Ն հրամանով հաստատված հանձնման-ընդունման ակտը՝ համաձայն Պայմանագրի հավելվածի Ձևի:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ, ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

3.1 Պայմանագրով տրամադրվող օժանդակության գումարը կազմում է ——— ——————— (_____)դրամ:

3.2. Օժանդակության տրամադրման գումարի հաշվարկման համար հիմք է հանդիսանում արտահանող երկրի ապրանքային հայտարարագրի մաքսային արժեքի («մաքսային տարածքում վերամշակում» ընթացակարգով ներմուծած և հետագայում «վերաարտահանում» ընթացակարգով արտահանած հայկական ծագման ապրանքների դեպքում՝ այդ ապրանքների ստացման նպատակով վերամշակման ծառայության արժեքի) և ներմուծման երկրում փաստացի կիրառված մաքսատուրքի դրույքաչափով հաշվարկված գումարը:

3.3. Եթե արտահանող երկրի ապրանքային հայտարարագրի մաքսային արժեքի և ներմուծման երկրում փաստացի կիրառված մաքսատուրքի դրույքաչափով հաշվարկված գումարն ավելի մեծ է, քան ներմուծման երկրի

ապրանքային հայտարարագրի մաքսային արժեքի և ներմուծման երկրում փաստացի կիրառված մաքսատուրքի դրույքաչափով հաշվարկված գումարը, ապա Պայմանագրի 3.1 կետի գումարը հաշվարկվում դրանցից նվազագույնի չափով:

3.4. Պայմանագրի 3.3 կետում նշված մաքսային արժեքն արտարժույթով արտահայտված լինելու դեպքում օժանդակության տրամադրման գումարը հաշվարկվում է օժանդակության տրամադրման գումարի վճարման օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տվյալ օրվա համար հրապարակված փոխարժեքով:

3.5 Փոխհատուցման ենթակա գումարը փոխանցվում է Շահառուի հաշվեհամարին՝ անկանխիկ եղանակով:

3.6. Նախարարությունը Պայմանագրի 3.1. կետում նշված օժանդակության գումարը Պայմանագրի հավելվածի Ձևով հաստատված հանձնման-ընդունման ակտի հիման վրա փոխանցում է Շահառուի բանկային հաշվին՝ 2.4.3. կետով սահմանված պահանջների կատարումից հետո 14 աշխատանքային օրվա ընթացքում:

4. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

4.1 Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն,

որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

5.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՄԱՆ, ՓՈՓՈԽՄԱՆ ԵՎ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1 Պայմանագիրը կարող է փոփոխվել և լուծվել Կողմերի համաձայնությամբ՝ ծրագրի պահանջների պահպանմամբ: Պայմանագրի փոփոխման կամ լուծման վերաբերյալ համաձայնությունը կնքվում է գրավոր:

6.2 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը քննվում են առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից և ___ էջից (ներառյալ հավելվածը), որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

7.2 Պայմանագրով չնախատեսված դրույթները կարգավորվում են Որոշմամբ սահմանված կարգով:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	ՇԱՀԱՌՈՒ
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն Հասցե՝ 0010, ք. Երևան, Միեր Մկրտչյան 5 ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Հ/Հ ՀՎՀՀ 02698604 ՀՀ էկոնոմիկայի նախարարության գլխավոր քարտուղար	_____ Հասցե՝ ՀՀ _____ մարզ, _____ համայնք, ___ փողոց, տուն ____ Հեռ.+374 _____ «_____ԲԱՆԿ» -ԲԸ ՀՎՀՀ _____ Հ/Հ _____
_____ (ստորագրություն) Կ.Տ	_____ (ստորագրություն) Կ.Տ

Հավելված
202... թ. ....-ին կնքված
N ..... պայմանագրի
Ձև
Հաստատում եմ
ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

.....
(անուն, ազգանուն)
.....
(ստորագրություն, (ամսաթիվ)

Ա Կ Տ Ն

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«___» «_____» 202.... թ.

Պայմանագրի անվանումը՝ .....

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «.....» «.....» 20.... թ.

Պայմանագրի համարը՝ .....

Սուբսիդիա տրամադրող ՀՀ պետական կառավարման մարմինը՝ ի դեմս ՀՀ էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) և սուբսիդիա ստացող իրավաբանական անձը (այսուհետ՝ Շահառու)

ի դեմս .....-ի կազմեցին սույն ակտը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Շահառուն

«.....» «.....» 20.....թ. ---------- կատարած արտահանմանը վերաբերող ներքոնշյալ փաստաթղթերը ներկայացրել է Նախարարություն, իսկ Նախարարությունը ներկայացված փաստաթղթերի հիման վրա տրամադրում է օժանդակություն (սուբսիդավորում):

h/h	Համառոտ նկարագիրը (ՀՀ կառավարության 2025 թվականի հունվարի 23-ի N 98-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) հաստատված Արտահանման խթանման նպատակով օժանդակության տրամադրման ծրագրի շրջանակներում ներկայացվող հայտ և կից փաստաթղթերի փաթեթ)	Քանակը (փաթեթ)	Հայտի հիման վրա վճարման ենթակա օժանդակության գումարի հաշվարկման բազա (ապրանքի արտահանման/ներմուծման հայտարարագրի մաքսային արժեք)	Մեկ միավորի գինը (մաքսատուրքի դրույքաչափ՝ %)	Տրամադրվող սուբսիդիայի չափը (արտարժույթ)	Վճարման ենթակա գումարը (արտարժույթ)	Վճարման ամսաթիվը, /վերջնաժամկետը՝ ամիս/
	1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**
1.							
2.							
.....							
	Ընդամենը						

* Օժանդակության տրամադրման գումարը հաշվարկվում է օժանդակության տրամադրման գումարի վճարման օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տվյալ օրվա համար հրապարակված փոխարժեքով:

Հանձնեց

_____

ստորագրություն

_____

ազգանուն, անուն

Կ.Տ.

Ընդունեց

_____

ստորագրություն

_____

ազգանուն, անուն

Կ.Տ.»: